

Տեղեկատվական ամփոփագիր  
Քարտայի հաշվի բացման, քարտի տրամադրման և սպասարկման

Քարտի տեսակ՝ Maestro

1. Ընդհանուր տեղեկատվություն

Քարտի տրամադրման և PIN կոդի թողարկման և տրամադրման համար վճար չի գանձվում  
Քարտային հաշվին առկա դրամական միջոցների արժույթը՝ AMD, USD, EUR

Քարտի տարեկան սպասարկման վճար՝ 3000 ՀՀ դրամ/1000 ՀՀ դրամ Բանկի աշխատակիցների համար

Դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝ 3%

Քարտային հաշվի չնվազող գումար 2000 ՀՀ դրամ, 5 ԱՄՆ դոլար կամ 5 Եվրո /Բանկի աշխատակիցների քարտային հաշվի չնվազող մնացորդը՝ 1000 ՀՀ դրամ, 3 ԱՄՆ դոլար կամ 2 Եվրո

Քարտային միջոցների կանխիկացման տոկոս՝

-0,3% ԲՏԱ Բանկի կանխիկացման կետերում

-0,8% Հայաստանի Հանրապետության տարածքի այլ բանկերի կանխիկացման կետերում /Առքա համակարգում/  
բացատրությամբ Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ և Առեքսիմբանկ ՓԲԸ կանխիկացման կետերում

-1% (առնվազն 1500 ՀՀ դրամ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող Բանկերի կանխիկացման կետերում, ինչպես նաև ՀՀ տարածքում Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ և Առեքսիմբանկ ՓԲԸ կանխիկացման կետերում

Անկանխիկ գործարքների համար վճար չի գանձվում

Քարտի բլոկավորման համար վճար չի գանձվում

Քարտի ապաբլոկավորում՝ 1000 ՀՀ դրամ

Կորցրած կամ վնասված քարտի և PIN կոդի վերաթողարկում՝ 3000 ՀՀ դրամ

Ամսեկան քաղվածքի տրամադրման համար վճար չի գանձվում, լրացուցիչ քաղվածքի տրամադրումը՝ 1000 ՀՀ դրամ

Մեկ օրվա կանխիկացման գործարքների գումար՝ 500000 ՀՀ դրամ, 1500 ԱՄՆ դոլար կամ 1000 Եվրո

Կանխիկացման գործարքների թույլատրելի քանակ՝ 5 անգամ

Մեկ օրվա անկանխիկ գործարքների գումար՝ 500000 ՀՀ դրամ, 1500 ԱՄՆ դոլար կամ 1000 Եվրո

Մեկ օրվա գործարքների ընդհանուր գումարը՝ 1000000 ՀՀ դրամ 3000 ԱՄՆ դոլար կամ 2000 Եվրո

Մեկ օրվա գործարքների ընդհանուր գումարը 1000000 ՀՀ դրամ, 3000 ԱՄՆ դոլար կամ 2000 Եվրո

Լրացուցիչ քարտի տրամադրում՝ 2000 ՀՀ դրամ

Քարտային հաշվից այլ քարտային հաշվի դրամական միջոցների փոխանցման համար գանձվող միջնորդավճարները՝

-0,3% ԲՏԱ Բանկի քարտի հաշվից ԲՏԱ Բանկի քարտի հաշվին փոխացելու դեպքում

-0,4% ԲՏԱ Բանկի քարտի հաշվից այլ Բանկի քարտի հաշվին

2. Հաշվի սպասարկումից կամ հաշվի պայմանագրից բխող վեճերի լուծման կարգ՝

Հաշվետիրոջ մոտ պայմանագրից բխող բոլոր առաջանալու դեպքում նա կարող է պաշտպանել իր իրավունքները ներկայացնելով վեճի առարկան Բանկ դիմելով ֆինանսական համակարգի հաշտարարին կամ

իրավունքները ներկայացնելով վեճի առարկան Բանկ, դիմելով ֆինանսական համակարգի հաշտարարին կամ դիմելով դատարան:

Բանկը պարտավոր է քննել Հաշվետիրոջ բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝

սկսած այն պահից երբ հաճախորդն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

Բանկը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետիրոջը տալ վերջնական պատասխան:

Բանկի պատասխանը Հաշվետիրոջը չբավարարելու դեպքում, կամ պատասխանը նշված ժամկետից ուշացնելու դեպքում, վերջինս կարող է

դիմել Ֆինանսական համակարգի Հաշտարարին, համաձայն Ֆինանսական

համակարգի հաշտարարի մասին ՀՀ Օրենքի կամ դատարան: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվում են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

Պայմաններ և սահմանափակումներ` Հաշվետերը կարող է պահանջել Բանկից վերադարձնել հաշվին առկա գումարը և վճարել համապատասխան տոկոսագումարներ: Բանկը պարտավոր է հաշվի գումարը վերադարձնել Հաշվետիրոջը նրա առաջին իսկ պահանջով պահպանելով պայմանագրով նախատեսված կետերը: Հաշվետերը պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների, դրան համապատասխան սահմանված բանկային կանոնների, բանկային հաշիվների մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:

կանոնների, բանկային հաշիվների մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:

Պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության, Հաշվետիրոջը նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստյան կամ փոփոխության դեպքում Հաշվետերը պարտավոր է 10 բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին` անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Հաշվետերը կրում է հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքները:

Հաշվին առկա գումարը կամ տոկոսները ստանալիս Հաշվետերը պետք է Բանկ ներկայանա անձը կամ իրավասությունները հաստատող փաստաթղթով և պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկի մասնաճյուղերում ֆիզիկական անձանց, այդ թվում` անհատ ձեռնարկատերերի ներդրված ավանդները երաշխավորվում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Երաշխավորված ավանդի չափերն են`

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը չորս միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա

երաշխավորված ավանդի չափը երկու միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը երկու միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը` մինչև չորս միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է երկու միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային բանկային ավանդը` երկու միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Հաշվետերը` նույն բանկում ունեցած բոլոր դրամային հաշիվները համարվում են մեկ հաշիվ և հաշվետիրոջ` նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային հաշիվները համարվում են մեկ հաշիվ:

### 3. Քարտային հաշվի պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ

Նախնական փողի քանակը` 100 000 AMD

Տարեկան անվճար տոկոսը` 3.00 %

Միջին օրվա փողի քանակը` 100 000 AMD

$$X = (1 + \frac{r}{n})^n - 1$$

որտեղ`

X` քարտային հաշվի պայմանագրով վճարվող տոկոսադրույքն է

Rag` քարտային հաշվի պայմանագրով վճարվող տոկոսադրույքն է

n` քարտային հաշվի պայմանագրով վճարվող տոկոսների վճարումների քանակն է մեկ տարվա ընթացքում

